

## ՀՐԱՎԵՐ

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը («ՆՁԱԿ» ՊՈԱԿ) 2018թ. հունիսի 21-ին, ժամը 14:30-ին Երևանի 2800-ամյա հորեյանին ընդառաջ կազմակերպում է Երևանին նվիրված նոր հրատարակված գրքերի հեղինակների հետ հանդիպում-քննարկում:

Միջոցառման նպատակն է կարևորել հազարամյակների պատմություն ունեցող մեր մայրաքաղաքի անցյալի ու ներկայի, ճարտարապետության, մշակույթի, էներգետիկայի և ընդհանրապես, քաղաքի կյանքի մասին պատմող նոր գրքերի հրատարակումը, ինչպես նաև նման արժեք ներկայացնող մասնագիտական գրքերով ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանի հիմնապաշարների համալրումը:

Միջոցառումը նախատեսված է քաղաքաշինության, ճարտարապետության, մշակույթի և այլ ոլորտների, ուսանողական, երիտասարդական կառույցների ներկայացուցիչների ու հետաքրքրված անձանց համար:

## Ծրագիր

❖ Երևանի պատմությանը և մշակույթին վերաբերող «Երևանի տարեգրությունը», «Երևանի նշանավոր ընտանիքները», «Երևանը հայ երգարվեստում» գրքերը, «Երևան» գիտական հոդվածների ժողովածուն (4 հատոր) կներկայացնի Երևան քաղաքի պատմության թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Արմինե Սարգսյանը:

❖ Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն, արվեստաբան Անի Հայկազուն Գրիգորյանը հանդես կգա Ալեքսանդր Թամանյանի 140-ամյակին նվիրված զեկուցումով. «Հայ նոր ճարտարապետության հիմնադիր Ալեքսանդր Թամանյանի գիտական ժառանգությունը Երևանի վերաբերյալ» թեմայի շուրջ: Բանախոսը կներկայացնի իր հեղինակած «Երևանի մեմորիալ հուշարձանները» և «Հուշագրելու արվեստը Երևանում» գրքերը:

❖ Ելույթ կունենա «Երևանի էներգետիկան 110 տարեկան է» և «Երևան քաղաքի փողոցների լուսավորության պատմություն» գրքերի հեղինակ, գիտնական, գրող, հրապարակախոս Ստեփան Պապիկյանը, ով կխոսի Երևանի էներգետիկայի պատմության և զարգացման հեռանկարների մասին:

Գրքերի հեղինակներին կհանձնվեն շնորհակալագրեր՝ գրադարանին արժեքավոր գրքեր նվիրաբերելու համար:

Միջոցառման շրջանակներում կգործի գիտատեխնիկական գրադարանում առկա Երևանին վերաբերող գրականության ցուցահանդես, ներկաները կծանոթանան տրամադրվող ժամանակակից գրադարանային-տեղեկատվական ծառայություններին:

Միջոցառումը տեղի կունենա «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում (ք. Երևան, Կոմիտասի 49/3, խորհրդակցությունների դահլիճ, 2-րդ հարկ, կայքէջ՝ <http://www.innovcentre.am/hy/>, ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/InnovCentre>):

Կոնտակտային տվյալներ

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ  
Տեղեկատվական ապահովման և հասարակայնության հետ կապերի բաժին  
Հեռ.՝ 011-238747, Էլ. փոստ՝ [adasarg@innovcentre.am](mailto:adasarg@innovcentre.am)